



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ (DIGEST)
N6(7) 2009թ. ապրիլի 21- մայիսի 20

25 հունիսի, 2009թ.

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ..... 3

1.1 Օրենքներ 3

1.2 ՀՀ կառավարության որոշումներ..... 4

1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ 5

2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ 6

3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ..... 7

3.1 Կառուցվածք և գործառույթներ..... 7

3.2 Ծրագրեր և կատարողականություն 8

3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների.....10

3.4 Միջազգային համագործակցություն..... 11

3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում 11

3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և “թեժ գծի” վերլուծություն..... 11

3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր..... 12

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ¹

1.1 Օրենքներ

Փաստաթուղթ.	“Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	07 ապրիլի, 2009թ., ՀՕ-79-Ն
Հրատարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 22 (688), 29.04.2009թ.
Ուժի մեջ է.	30 ապրիլի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Օրենքը տարածվում է համայնքների վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատարածքների նկատմամբ 2008 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հողի հարկի պարտավորություն ունեցող հողի հարկ վճարող ֆիզիկական անձանց վրա:

Մինչև 2009 թվականի դեկտեմբերի 31-ը համայնքների վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատարածքների համար հաշվարկված հողի հարկի գումարները (մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ) առանց հաշվարկված տույժերի ու տուգանքների վճարած ֆիզիկական անձինք ազատվում են գյուղատնտեսական նշանակության հողատարածքների համար հողի հարկը սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից:

Գյուղատնտեսական նշանակության հողերի համար 2008 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հողի հարկի նկատմամբ նախորդ երեք տարիներին հաշվարկված և վճարված տույժերի գումարները հաշվանցվում են հարկատուների՝ հողի հարկի գծով ընթացիկ կամ առաջիկա վճարումների հաշվին:

Փաստաթուղթ.	“Գույքահարկի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	07 ապրիլի, 2009թ., ՀՕ-82-Ն
Հրատարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 23 (689), 06.05.2009թ.
Ուժի մեջ է.	16 մայիսի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Օրենքի փոփոխությամբ սահմանվել է,

1. Ֆիզիկական անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը (մինչև սույն փոփոխությունը՝ նշված ժամկետը 2008 թվականի դեկտեմբերի 31-ն էր) խոտանելու դեպքում այդ փոխադրամիջոցի վերջին տարեկան տեխնիկական գննության տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ից գույքահարկի պարտավորությունը դադարում է: Ի դեպ, սույն դրույթը տարածվում է նաև 01.01.2009թ.-ից հետո մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը (16.05.2009թ.-ը) ծագած հարաբերությունների վրա:

2. “Գույքահարկի մասին” ՀՀ օրենքի 15-րդ հոդվածին համապատասխան (հաշվի առնելով “Գույքահարկի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին” 26.12.2008թ. ՀՕ-250-Ն, ուժի մեջ է մտել 09.01.2009թ.-ից) ծառայության ընթացքում գույքահարկից ազատվում էին ՀՀ զինված ուժերի և այլ զորքերի զինծառայողները, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով դաշնակից երկրների զինված ուժերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք: Սույն փոփոխությամբ “Գույքահարկի մասին” ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը խմբագրվել է, որին համապատասխան, ծառայության ընթացքում գույքահարկից ազատվում են Հայաստանի Հանրապետության միջազգային

¹ Դիտարկվել և հիմք են ընդունվել.

- ՀՀ պաշտոնական տեղեկագրեր. թիվ 20(686) 22 ապրիլի 2009թ. -թիվ 26(692), 20 մայիսի 2009թ.
- ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրեր, թիվ 16 (334), 4 մայիսի 2009թ. -թիվ 17(335), 15 մայիսի, 2009թ.

պայմանագրերով դաշնակից երկրների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք:

Փաստաթուղթ.	“Հարկային ծառայության մասին” ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	7 ապրիլի, 2009 թ., ՀՕ-95-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N°24(690), 6.05.2009 թ.
Ուժի մեջ է.	16 մայիսի, 2009 թ.

Համառոտ նկարագիր

“Հարկային ծառայության մասին” ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրվել է նոր խմբագրությամբ: Սահմանվել է դրույթ, համաձայն որի՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման դեպքում հարկային ծառայողն անմիջապես զեկուցում է վերադասության կարգով, իսկ զենքի կիրառման բոլոր դեպքերի մասին՝ նաև դատախազին:

Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման (գործադրման) հետևանքով առաջացած մարմնական վնասվածքների, մահվան բոլոր դեպքերի մասին հարկային մարմնի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն անմիջապես տեղյակ է պահում առողջապահության և դատախազության համապատասխան մարմիններին:

Փաստաթուղթ.	“Մաքսային ծառայության մասին” ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	7 ապրիլի, 2009 թ., ՀՕ-96-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N°24(690), 6.05.2009 թ.
Ուժի մեջ է.	16 մայիսի, 2009 թ.

Համառոտ նկարագիր

“Մաքսային ծառայության մասին” ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրվել է նոր խմբագրությամբ: Սահմանվել է դրույթ, համաձայն որի՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման դեպքում մաքսային ծառայողն անմիջապես զեկուցում է վերադասության կարգով, իսկ զենքի կիրառման բոլոր դեպքերի մասին՝ նաև դատախազին:

Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման (գործադրման) հետևանքով առաջացած մարմնական վնասվածքների, մահվան բոլոր դեպքերի մասին մաքսային մարմնի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն անմիջապես տեղյակ է պահում առողջապահության և դատախազության համապատասխան մարմիններին:

Նմանատիպ փոփոխություններ կատարվել են նաև “Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին”, “Քրեակատարողական ծառայության մասին” և “Ոստիկանության մասին” ՀՀ օրենքներում:

1.2 ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1330-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	09 ապրիլի, 2009 թ., 404-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 23 (689), 06.05.2009 թ.
Ուժի մեջ է.	07 մայիսի 2009 թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ վերանայվել է վիճակահանության արդյունքում շահող կտրոնների համար բոնուսների հաշվարկման և վճարման գործող կարգը: Նոր կարգին համապատասխան՝ բոնուսը վիճակահանության արդյունքում չշահած կտրոնների խմբաքանակների համար ՀՀ կառավարության

30.10.2008թ. N1330-Ն որոշմամբ հաստատված կարգով ու չափերով հաշվարկվող գումար է: 2009 թվականի ապրիլի 1-ից հետո (այդ թվում՝ ապրիլ ամսվա ընթացքում տրամադրված և մայիսի 8 -ին կայանալիք վիճակահանության արդյունքում) շահող կտրոնների համար պարգևավճարի նկատմամբ բնուսներ բանկերի կողմից չեն հաշվարկվելու և չեն վճարվելու :

Միաժամանակ, վիճակահանության արդյունքում շահող կտրոնների համար պարգևավճարների հաշվարկման և տրամադրման կարգը մնացել է անփոփոխ: Յուրաքանչյուր ամսվա ընթացքում տրամադրված ՀԴՄ կտրոններով վիճակահանությունը շարունակվելու է անցկացվել այդ ամսվան հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը, որին մասնակցելու են միայն նախորդ ամսվա ընթացքում տրամադրված ՀԴՄ կտրոնները:

Բնուսների հաշվարկման և տրամադրման նոր կարգին համապատասխան՝ եռամսյակի ընթացքում վիճակահանությունների արդյունքում չշահած կտրոններ տիրապետող ֆիզիկական անձինք բնուս ստանալու նպատակով մինչև եռամսյակին հաջորդող եռամսյակի վերջին աշխատանքային օրը ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային (տարածքային) տեսչություն են ներկայացնելու կտրոնների խմբաքանակները: Ներկայացված խմբաքանակներով կտրոնները հարկային մարմնի կողմից ստուգվելուց հետո ֆիզիկական անձին տրվելու է հարկային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ձևով միջնորդագիր՝ հաշվարկված բնուսը ստանալու նպատակով բանկ ներկայացնելու համար: Ֆիզիկական անձինք բնուս ստանալու համար մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող եռամսյակի վերջին աշխատանքային օրը բանկ են ներկայանալու անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով՝ ներկայացնելով հարկային մարմնի կողմից տրված միջնորդագիրը, անձնագրի կամ անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ.	“Ավելացված արժեքի հարկի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածին համապատասխան հարկային մարմիններին տեղեկություններ ներկայացնելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարի 2001 թվականի հունիսի 7-ի N02/787 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին” ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը.	3 ապրիլի 2009թ., 808-Ն
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 17 (335), 15.05.2009թ.
Ուժի մեջ է.	25 մայիսի 2009թ

Համառոտ նկարագիր

Հրամանով սահմանվում է “Ավելացված արժեքի հարկի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածին համապատասխան հարկային մարմիններին տեղեկություններ ներկայացնելու, ներկայացված տեղեկությունների ճշգրտման կարգը: Կարգով, մասնավորապես՝ սահմանում է, թե որ դեպքերում հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները համարվում են ԱԱՀ վճարողի կողմից չներկայացված, որ դեպքերում են ներկայացվում ճշգրտված տեղեկանքներ, ինչ կարգով են դրանք ներկայացվում: Կարգով հստակեցվում է, թե ինչ ժամկետներում է իրականացվում ստացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցումը՝ ճշգրտված տեղեկությունների ներկայացման, օրենքով սահմանված ժամկետից ուշ ներկայացման դեպքերում:

Փաստաթուղթ.	“2009 թվականի ընթացքում “Հսկիչ-դրամարկղային մեքենաների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի կիրառման որոշ հարցերի մասին” պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը.	10 ապրիլի 2009թ., 3
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 16 (334), 04.05.2009թ.
Ուժի մեջ է.	4 մայիսի 2009թ.

Համառոտ նկարագիր

Պաշտոնական պարզաբանմամբ հստակեցվում է հսկիչ-դրամարկդային մեքենաների կիրառման, գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտման համար 2009 թվականի ընթացքում օրենքով նախատեսված տուգանքների կիրառման հարցերը: Քանի որ 2009 թվականին կիրառվող տուգանքների չափը կախված է հարկ վճարողին ԱԱՀ վճարող համարելու կամ չհամարելու հանգամանքից՝ պաշտոնական պարզաբանման մեջ հստակեցվել է, թե որ դեպքերում է անձը համարվում ԱԱՀ վճարող:

2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ

Փաստաթուղթ.	“Պետական տուրքի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	07 ապրիլի, 2009թ., ՀՕ-84-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 23 (689), 06.05.2009թ.
Ուժի մեջ է.	16 մայիսի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Օրենքի փոփոխությամբ վերացվել է անհատ ձեռնարկատերերի և առևտրային կազմա - կերպությունների համար “Պետական տուրքի մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված “Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար” պետական տուրքի վճարումից ազատման արգելքը:

Փաստաթուղթ.	“ՀՀ կառավարության 2001թ. դեկտեմբերի 5-ի N1194 որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	23 ապրիլի, 2009թ., 434-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 25 (691), 13.05.2009թ.
Ուժի մեջ է.	29 ապրիլի 2009թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ նախատեսվում է ՀՀ կառավարության 05.12.2001թ. “Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում պետական բաժնեմասից ստացվող շահութաբաժինների վճարման գործընթացում պետական բաժնեմասը տնօրինող մարմինների աշխատանքը կազմակերպելու մասին» N1194 որոշման մեջ կատարել փոփոխություն և լրացում, համաձայն որի, եթե հաշվետու տարվան նախորդող տարվա վերջի դրությամբ առկա է կուտակված պարտք, բաժնետերերի ընդհանուր ժողովների քվեարկությանն ու հաստատման ն է դրվում հաշվետու տարվա զուտ շահույթի և նախորդ տարվա վերջի դրությամբ կուտակված վնասի 3մլն դրամը գերազանցող դրական տարբերության 20 տոկոսը որպես տարեկան շահութաբաժին ՀՀ պետական բյուջե վճարելու հարցը: Սույն որոշման դրույթները տարածվում են 2008 թվականի և հե տագա տարիների տնտեսական գործունեության արդյունքներով ստացված զուտ շահույթից շահութաբաժինների հաշվարկման բազայի որոշման վրա:

Փաստաթուղթ.	Մահմանադրական դատարանի որոշումը 2008թ. դեկտեմբերի 10-ին Սոֆիայում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի հանրապետության միջև “Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին” 1995թ. ապրիլի 10-ին Սոֆիայում ստորագրված համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ
-------------	--

	ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով
Ամսաթիվը և համարը.	28 ապրիլի, 2009թ., ՄԴՈ-801
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 25 (691), 13.05.2009թ.
Ուժի մեջ է.	Հրապարակման պահից

Համառոտ նկարագիր

2008թ. դեկտեմբերի 10-ին Սոֆիայում ստորագրվել է արձանագրություն, որի նպատակն է անհրաժեշտ փոփոխություններ կատարել “ՀՀ և Բուլղարիայի Հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին” 1995 թ. ապրիլի 10-ին Սոֆիայում ստորագրված համաձայնագրում և այն համապատասխանեցնել երկու պետությունների տնտեսական և իրավական փոփոխություններին: ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ ՀՀ և Բուլղարիայի Հանրապետության միջև “ՀՀ և Բուլղարիայի Հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին” 1995 թ. ապրիլի 10-ին Սոֆիայում ստորագրված համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես՝

- համաձայնագրի գործողությունը տարածել շահութահարկի, ֆիզիկական անձանց եկամտահարկի և գույքահարկի վրա,
- երաշխավորել, որ գանձվող հարկը չի գերազանցի շահաբաժինների համախառն գումարի 5% -ը, եթե ռեզիդենտը համարվում է շահաբաժիններ վճարող ընկերության գույքի առնվազն 100.000 ԱՄՆ դոլարի կամ ազգային արժույթով դրա համարժեք գումարի սեփականատերը, եթե շահաբաժիններ ստացողը շահաբաժինների փաստացի սեփականատերն է,
- երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետությունում առաջացած տոկոսներից գանձված հարկը չի գերազանցի տոկոսների համախառն գումարի 5% -ը, եթե այդպիսի տոկոսները վճարվել են բանկի կամ ֆինանսական հաստատության կողմից տրված ցանկացած փախառության դիմաց, կամ տոկոսների համախառն գումարի 10% -ը՝ մյուս բոլոր դեպքերում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը Բուլղարիայի Հանրապետության ռեզիդենտ է,
- երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետությունում առաջացած ռոյալթիից գանձվող հարկը չի գերազանցի ռոյալթիի համախառն գումարի 5% -ը՝ ստացված որպես փոխհատուցում գրական, գեղարվեստական կամ գիտական ցանկացած ստեղծագործության, ներառյալ կինոժապավենների կամ հեռուստառադիոհեռարձակման դիմաց, կամ ռոյալթիի համախառն գումարի 10%-ը՝ մյուս բոլոր դեպքերում, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը Բուլղարիայի հանրապետության ռեզիդենտ է,
- երաշխավորել, որ Բուլղարիայի Հանրապետության ռեզիդենտին նախկինում կատարած վարձու աշխատանքի համար վճարված կենսաթոշակները և այլ նմանատիպ վարձատրությունը նրա և անուխտերը կհարկվեն միայն Բուլղարիայի Հանրապետությունում,
- երաշխավորել, որ վճարված կենսաթոշակները և Բուլղարիայի Հանրապետության սոցիալական ապահովման համակարգի մաս կազմող պետական ծրագրով կատարված նմանատիպ այլ վարձատրությունը կհարկվեն միայն Բուլղարիայի Հանրապետությունում,
- ապահովել, որպեսզի ՀՀ իրավասու մարմինները Համաձայնագրի կամ ՀՀ օրենքների դրույթների կիրառման համար անհրաժեշտ տեղեկություններ կփոխանցեն Բուլղարիայի Հանրապետության իրավասու մարմիններին ՀՀ կամ ՀՀ իշխանության տեղական մարմինների անունից կիրառվող ցանկացած տեսակի և բնույթի հարկերի վերաբերյալ, քանի դեռ այդ հարկումը չի հակասում համաձայնագրին:

3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ

3.1 Կառուցվածք և գործառնություններ

ՊԵԿ նախագահի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի կողմից առաջին փուլով ավարտվել են վերադաս մարմնի վերակազմակերպված կառուցվածքային ստորաբաժանումների գործառնությունների վերանայման, կրկնությունների բացառման նպատակով կազմակերպվող քննարկումները և ներկայումս գտնվում են հաստատման փուլում: Նորովի հաստատված գործառնությունները թույլ կտան

արդյունավետորեն իրականացնել հաջորդող քայլերը. “բիզնես պրոցեսների” ընթացակարգերի հաստատում, ապա աշխատատեղերի (պաշտոնների) նկարագրերի սահմանում, ապա և, ամենավերջում, կատարողականության գնահատման համապատասխան ցուցանիշների սահմանում:

3.2 Ծրագրեր և կատարողականություն

3.2.1 Ծրագրեր և կատարողականություն / հարկային ծառայության մասով/

ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում տարեկան և այլ աշխատանքային ծրագրերից բխող միջոց առումների կատարման աշխատանքների իրականացումը, կազմակերպումը կանոնակարգելու նպատակով ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 18.03.09թ. հաստատվել է “ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում ընթացիկ աշխատանքային ծրագրերի կատարման ապահովման ընթացակարգի մասին” N 549-Ա հրամանը: Վերջինս տարածվում է հրամանի ուժի մեջ մտնելու պահին չավարտված և հետագայում հաստատվող բոլոր ընթացիկ ծրագրերի վրա:

Հաստատված հրամանի համաձայն՝ ընթացիկ ծրագրերի միջոցառումների կատարման հիմնական պատասխանատուները աշխատանքների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը (հաշվետվությունները) ներկայացնում են եռամսյակային պարբերա կանությամբ (մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը), եթե ծրագրով նախատեսված միջոցառման տևողությունը ավել է քան 3 ամիսը և մեկ անգամ (մինչև ժամկետի ամսվան հաջորդող ամսվա 15-ը), եթե ծրագրով նախատեսված միջոցառման տևողությունը 1-3 ամիս է: Հրամանով նախատեսվել է նաև համապատասխան տեղեկատվությունը տեղադրել ՊԵԿ տեղեկատվական դարանում: ՀՀ ԿԱ ՊԵԿ համապատասխան ստորաբաժանումների կողմից իրականացվում է միջոցառումների մոնիտորինգ՝ հաստատված ժամկետներում միջոցառումները ավարտելու նպատակով:

Համառոտագրի այս ժամանակահատվածի ընթացքում իրականացվել են աշխատանքներ հետևյալ միջոցառումների կատարման ուղղությամբ.

1. Առանձին ֆորում ստեղծելու նպատակահարմարության հարցի քննարկում (այդ թվում՝ պրոֆեսիոնալ հանրության հետ), որը բաղկացած է լինելու միջազգային կամ բարձր վարկանիշ ունեցող աուդիտորական և հաշվապահական խորհրդատվական ընկերություններից, որին հարկային ծառայությունը յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ կներկայացնի առավել խնդրահարույց հարցերը / ծրագրի 47-րդ միջոցառում^{2/}

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային ռազմավարության և պլանավորման վարչության կողմից մշակվել է միջոցառման հայեցակարգի փաստաթղթի սկզբնական տարբերակը և ներկայացվել է համակատարող ստորաբաժանումներին առաջարկության և լրամշակման համար: Միաժամանակ առաջարկվել է համակատարողներին մշակված հայեցակարգը միացնել և քննարկել “Հարկային միջնորդների ինստիտուտի հայեցակարգի” շրջանակներում համարելով դրա բաղադրիչ:

2. “Հարկային միջնորդների ինստիտուտի ներդրման հայեցակարգը” ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը /ծրագրի 60-րդ միջոցառում/

Մշակվել և շահագրգիռ մարմինների կարծիքին է ներկայացվել “Հարկային միջնորդների ինստիտուտի ձևավորման մասին” ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:

Հայեցակարգի մշակման համար հիմք են հանդիսացել ՀՀ ներկա իրավիճակի, ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության մասնագետների խմբի կողմից 2008թ. կատարված հարկային միջնորդների դերի ուսումնասիրությունները: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված հայեցակարգում ներառվել են ՀՀ հարկային համակարգում հարկային միջնորդների ինստիտուտի զարգացման ուղիները, սկզբունքները, ինչպես նաև պետական աջակցության շրջանակները:

Նախագիծը ներկայացվել է հասարակական խորհրդի կարծիքին: Ակտիվ քննարկումներ են

² ի նկատի է առնվում ՀՀ կառավարության 07.08.09թ. «ՀՀ հարկային վարչարարության ռազմավարության 2008 - 2011թթ. ծրագիրը հաստատելու մասին» թիվ 941 -Ն որոշումից բխող միջոցառումները

իրականացվել հաշվապահական ծառայությունների կենտրոնում՝ Հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի, ինչպես նաև փաստաբանների միության ներկայացուցիչների մասնակցությամբ: Ներկայացվել են առաջարկություններ, ձևավորվել է ընդհանուր կարծիք նախագծի վերաբերյալ:

ԵՎԲԱԽ-ում տեղի ունեցած մի քանի քննարկումների ընթացքում տրվել են լրացուցիչ հանձնարարականներ, այդ իսկ պատճառով ՀՀ կառավարություն է ներկայացվել միջոցառման ժամկետի հետաձգման նախագիծը, որով, համաձայն ՀՀ վարչապետի հանձնարարականի, միջոցառման ժամկետը հետաձգվել է 30.09.09թ:

3. Հարկային օրենսդրության խախտումների համար պատասխանատվության նորմերի կիրառման պրակտիկայի ու արդյունավետության ուսումնասիրում: Դրա արդյունքում հարկային օրենքը բազմակի և կոպտորեն խախտելու դեպքում պատասխանատվության միջոցների խստացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը՝ ներառյալ թաքնված աշխատող ուն ենալու դեպքը: Դա հանդիսանալու է որպես ինքնագնահատման (հարկերի կամավոր վճարում) համակարգի անհրաժեշտ տարր / ծրագրի 62-րդ միջոցառում/

Մշակվել է “Օրենսդրության խախտումների համար պատասխանատվության նորմերի կիրառման պրակտիկայի ու արդյունավետության ուսումնասիրման վերաբերյալ” հարցաթերթ: Կատարվել է ներքին հարցում, որի արդյունքներն ամփոփվել են, մշակվել է վերլուծական նյութ:

4. Հարկային եկամուտների, ապառքների, գերավճարների վերլուծության համապարփակ մեթոդաբանության մշակում: Դա պետք է հնարավորություն տա դուրս բերել ըստ ոլորտների, ըստ տարածաշրջանների, ըստ հարկատեսակների, ըստ ձեռնարկությունների չափի, ըստ ապրանքատեսակների և այլ սովորաբար կարևոր համարվող չափանիշների / ծրագրի 83-րդ միջոցառում/

Ուսումնասիրվել է միջազգային փորձը, աշխատանքներ են իրականացվել տնտեսական գործունեության դասակարգիչները ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում ներգրավելու հարցի ուղղությամբ, կազմակերպելով ներկայացումներ և քննարկումներ ՀՀ ԱՎԾ և ԿԲ մասնագետների հետ:

5. Հաշվետվությունները էլեկտրոնային տարբերակով հարկային մարմիններ ներկայացնելու համար օրենսդրական փոփոխությունների փաթեթի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը / ծրագրի 7-րդ միջոցառում³/

ՀՀ կառավարության 2006 թվականի “ Հարկային և պարտադիր այլ վճարների ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և տեղեկությունները փոստի միջոցով հարկային մարմին ներկայացնելու պարզեցված ընթացակարգը և դրանք հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգն ու պայմանները հաստատելու մասին” թիվ 471-Ն որոշման մեջ, “Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին”, “Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին”, “Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին”, “Հարկերի մասին” ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերը ներկայացվել է ՀՀ կառավարություն և արժանացել հավանության:

6. Նորաստեղծ փոքր բիզնեսին աջակցելու առանձին ծրագրի մշակում և իրագործում / ծրագրի 12-րդ միջոցառում/

Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա կազմվել է փաստաթղթի նախնական տարբերակը, որտեղ ներառվել են այն օրենսդրական և վարչարարական բնույթի միջոցառումները, որոնք կիրառելի են նաև ՀՀ-ի համար: Փաստաթղթի նախնական տարբերակը ներկայացվել է

³ ի նկատի է առնվում ՀՀ կառավարության 2009թ. գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումներ

համակատարող ՊԵԿ այլ ստորաբաժանումներին՝ իրենց առաջարկությունները ներկայացնելու նպատակով:

3.2.2 Ծրագրեր և կատարողականություն/ մաքսային ծառայության մասով/

2009 թվականի մայիսի 14-ի ՀՀ կառավարության N 527-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 7-ի «ՀՀ հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011թթ. ծրագիրը հաստատելու մասին» N 941-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին որոշումը, որով հաստատվել է ՀՀ մաքսային վարչարարության ռազմավարության 2009-2012 թվականների ծրագիրը: Որոշման մեջ ավելացավ նոր հավելված՝ մաքսային ռազմավարական ծրագրի մասով: Արդյունքում մեկ որոշման մեջ ներառվեցին հարկային և մաքսային վարչարարության ռազմավարական ծրագրերը մոտա ատարիների համար: Թիվ 941 -Ն որոշման այդ նոր հավելվածը 2008 թվականի ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով հաստատված ՀՀ մաքսային վարչարարության ռազմավարության 2008-2012 թվականների ծրագիրն է, այն տարբերությամբ, որ այստեղ ներառված չեն 2008 թվականի համար նախատեսված միջոցառումները, որոնք, ըստ էության, ամբողջությամբ իրականացվել են: Բացի այդ նոր ծրագրում ընդգրկվել են 6 նոր միջոցառումներ՝ Համաշխարհային բանկի կողմից կատարված առաջարկությունների հիման վրա: Դրանք հիմնականում վերաբերում են էլեկտրոնային հայտարարագրման համակարգի ներդրմանը, սահմանների կառավարման արդյունավետության բարձրացմանը և մաքսանենգության դեմ պայքարի ուժեղացմանը: Բացի այդ տեղաշարժվել են որոշ միջոցառումների իրականացման ժամկետները: Ծրագրում ներառված են 7 սկզբունքներ, որոնք նախատեսում են 52 միջոցառում: 2009 թվականի համար նախատեսված են 25 միջոցառումներ, որոնցից 15-ը 2009 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում: 2010 թվականի համար՝ 12 միջոցառումներ և 3-ական միջոցառումներ 2011 և 2012 թվականների համար: Եվս 8 միջոցառումներ ունեն շարունակական բնույթ: 2009 թվականի երկրորդ եռամսյակում նախատեսված 15 միջոցառումներից արդեն իսկ կատարվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ «Մաքսային միջնորդի և մաքսային փոխադրողի մատուցած ծառայությունների դիմաց սահմանված սակագների վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության ապահովման կարգը սահմանելու մասին», «Մաքսային ձևակերպումների մասնագետների որակավորման քննությունների ծրագիրը և դրանց անցկացման կարգը սահմանելու մասին», «Մաքսային միջնորդի կողմից մաքսային ձևակերպումների և մաքսային փոխադրողի կողմից մաքսային փոխադրումների վերաբերյալ վերադաս մաքսային մարմին հաշվետվության ներկայացման կարգը սահմանելու մասին», «Անմաքս առևտրի խանութների պահեստի և առևտրի սրահի ապրանքների շարժի հաշվառման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանի նախագծերի մշակումը, ՀՀ կառավարության 03.11.2005թ. N 1930-Ն որոշման մեջ փոփոխության կատարումը, որը ուղղված է Միջազգային ճանապարհային փոխադրումների կոնվենցիայի /TIR/ շրջանակներում ՀՀ մաքսային սահմանով ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների տեղաշարժի պարզեցմանը:

Բոլոր այն միջոցառումները, որոնք դեռ չեն կատարվել, գտնվում են ընթացքում, և նախատեսվում է, որ սահմանված ժամկետներում ավարտին կհասցվեն:

3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

21.04.2009թ.-ից մինչև 20.05.2009թ.-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել է ընդամենը թվով 12 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում թվով 17 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից 21.04.2009թ.-ից մինչև 20.05.2009թ.-ը քննարկվել է ընդամենը թվով 16 բողոք, որից.

- բավարարվել է մասնակի 1 բողոք,
- կարճվել է 1 բողոք,
- մերժվել է 14 բողոք:

3.4 Միջազգային համագործակցություն

Սույն թվականի ապրիլի 19-ից 25-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ միջազգային հարաբերությունների բաժնի աշխատակիցը գործուղվել էր Սլովենիայի Հանրապետություն՝ “Հայաստանի Հանրապետության կառավարության և Սլովենիայի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին” համաձայնագրի նախագծի շուրջ բանակցություններ վարելու նպատակով: Բանակցությունների ավարտից հետո ս.թ. ապրիլի 24-ին վերոհիշյալ համաձայնագիրը նախատրագրվել է:

Մայիս ամսին ՀՀ ԱԳՆ է ուղարկվել “Հայաստանի Հանրապետության կառավարության և Բրազիլիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին” համաձայնագրի լրամշակված նախագիծը՝ բրազիլական կողմին փոխանցելու նպատակով:

3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում

Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /հարկային և մաքսային ծառայությունների մասով/

2009թ. մայիսի 20-ին կայացել է ՊԵԿ հարկային ծառայության թափուր պաշտոնների համալրման նպատակով հերթական մրցույթը, որին մասնակցելու դիմում էին ներկայացրել 103 քաղաքացիներ: Մրցույթի արդունքում համալրվել է հարկային ծառայության 21 թափուր պաշտոն:

Հարկային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հերթական մրցույթները կայանալու են 2009թ. մայիսի 25-ին և հունիսի 23-ին, որոնց վերաբերյալ հայտարարությունները տպագրվել են “Ազգ” օրաթերթում և տեղադրվել www.taxservice.am ինտերնետային կայքում:

2009թ. ապրիլի 3-ից ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում ընթանում է հարկային ծառայողների ատեստավորման գործընթացը: Մինչև մայիսի 22-ը ատեստավորմանը մասնակցել են 550 հարկային ծառայողներ, որոնցից 121 հարկային ծառայողներ հարկային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի որոշմամբ չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոնին: Նրանցից 61-ը ազատվել են աշխատանքից, իսկ 60-ը՝ իջեցվել զբաղեցված պաշտոններից:

2009թ. մայիսի 19-ին մաքսային ծառայության 56 թափուր պաշտոնների համար հայտարարվել է մրցույթ, որին մասնակցելու համար դիմել են 171 քաղաքացի:

Մայիս ամսվա ընթացքում մաքսային ծառայողների ատեստավորման մասնակցել են 516 մաքսայի և ծառայողներ, որոնցից բացասական գնահատական են ստացել ու ազատվել զբաղեցրած պաշտոններից 50 մաքսային ծառայող:

3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և “թեժ գծի” վերլուծություն

3.6.1 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և “թեժ գծի” վերլուծություն / հարկային ծառայության մասով/

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության “Թեժ գիծ”-ը պաշտոնապես գործում է 2008թ. հոկտեմբերի 14-ից: 2009թ. մայիս ամսին ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՕ “Թեժ գծով” ստացվել է 146 բողոք և առաջարկություն: Բողոքների հիմնական մասն առնչվել է “Հսկիչ - դրամարկղային մեքենաների կիրառման մասին” ՀՀ օրենքի պահանջների խախտման փաստերին: Զանգահարողների մեծ մասի հարցումները հիմնականում վերաբերել են պարզավճարների տրամադրման նոր կարգին, ժամկետներին ու պայմաններին, մայիսի 8-ին կայացած վիճակահանությանը, շահած կտրոններին և թվերին, ինչպես նաև դրանց հետ կապված բազմաթիվ այլ հարցերի: Հարցերի մի ստվար խումբ էլ վերաբերել է հարկային օրենսդրությանը: Մասնագիտական պարզաբանումներ ստանալու համար քաղաքացիներին տրամադրվել են ՏՀՏ -ների համապատասխան բաժինների հեռախոսահամարները:

3.6.2 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և “թեժ գծի” վերլուծություն /մաքսային ծառայության մասով/

Ապրիլի 20-ից մինչև մայիսի 20-ը “թեժ գծով” ստացվել է 350-400 զանգ: Զանգահարողների գերակշիռ մասը խնդրել է տրամադրել մաքսային մարմինների գործունեության և մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված տեղեկատվություն կամ խորհրդատվության կարիք է ունեցել:

Նշված ժամանակահատվածում արձանագրվել է 9 բողոք, որոնք հիմնականում վերաբերել են ապրանքի մաքսային արժեքի որոշմանը, ավտոմեքենաների գնահատմանը, ինչպես նաև արտահանման թույլտվությանն առնչվող հարցերին: Որոշ բողոքներ էլ առնչվել են արտերկրից

նույնարկված ծանրոցների մաքսագերծման հետ կապված խնդիրներին:

Կախված անհրաժեշտությունից՝ քաղաքացուն կամ զանգահարել և պարզաբանում են տվել խնդրի առնչությամբ, կամ էլ հրավիրել են ՊԵԿ մաքսային ծառայության համապատասխան ստորաբաժանում՝ հարցն ավելի մանրամասն ուսումնասիրելու և տեղում անհրաժեշտ պարզաբանումներ տալու նպատակով:

Ապրիլի 20-ից մինչև մայիսի 20-ն արձանագրված բողոքներից ընթացքի մեջ է երկուսը: Մնացած բոլորին արձագանքվել է:

3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր

3.7.1 Հարկային վիճակագրության մի քանի թվեր

	Ցուցանիշ	2009 թվական		
		Ապրիլ	Հունվար-Ապրիլ	Աճի տեմպ %
		1	2	3
1	Հաշվառված՝ ՀՎՀՀ ստացած հարկ վճարողներ (միավոր)	1939	6252	92.7
2	Հարկային մարմնի կողմից պետ բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն. դրամ), այդ թվում՝	36 524.8	116 953.3	86.0
2.1	ԱԱՀ	4 919.5	21 841.7	66.1
2.2	Շահութահարկ	14 096.7	29 828.8	93.7
2.3	Ակցիզային հարկ	483.8	1 674.4	44.8
2.4	Եկամտահարկ	4 296.2	16 276.8	110.6
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	8 522.7	30 053.9	96.7
2.6	այլ	4 205.8	17 277.6	80.1
3	Հարկային մարմնի կողմից կատարված հարկային ստուգումներ (հատ)	3630	8596	198.4
4	Հարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն. դրամ)	2 636.4	9 120.3	79.9

3.7.2 Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

	Ցուցանիշ	2008թ.		2009թ.		Աճի տեմպը%	
		հունվար-ապրիլ	ապրիլ	հունվար-ապրիլ	ապրիլ	հունվար-ապրիլ	ապրիլ
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված մաքսային եկամուտներ (մլն դրամ)	74 234	21 431	63 683	16 243	85.8	75.8
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը(մլն դրամ), այդ թվում՝	477 768	141 139	374 691	110 551	78.4	78.3
	արտահանում (մլն դրամ)	103 650	31 676	65 914	22 665	63.6	71.6
	ներմուծում (մլն դրամ)	374 117	109 462	308 777	87 886	82.5	80.3
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների (միավոր)	12 921	4 599	9 813	3 113	75.9	67.7